Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՄԵԿՆԵՑ ԱՄՆ

Սեպտեմբերի 22-ին, օրվա երկրորդ կեսին, Նորին Սուրբ Օծությունն Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ, մեկնեց ԱՄՆ:

Մեկնելուց առաջ Նորին Սուրբ Օծությունը Մայր Տաճարում, Իջման Սուրբ Սեղանի առջև, ծնրադիր իր աղոթքն առաքեց առ Բարձրյալն Աստված, ապա, հակիրճ խոսքով դիմելով ներկաներին, ասաց. *«Աստված ձեր բոլորի հետ լինի այն օրերին, երբ ես բացակայեմ: Կմաղթեմ, որ այս բժշկական քննությունները լավ արդյունք տան, որպեսզի որևէ մտահոգություն չմնա ո՛չ իմ, ո՛չ ձեր մեջ և կարենանք նորեն լծվել և շարունակել այն գործը, որ Աստված վստահած է մեզի:*

Բժշկական քննությունից հետո ես երկու օրով պետք է մեկնեմ նաև Լոս Անջելես՝ իբրև Հայ Եկեղեցու պետ իմ գնահատանքը հայտնելու մի անձի, որը մեր Հանրապետության նախագահի հետ միասին, հարյուրերորդ անգամը ըլլալով, իր օդանավով, զանազան ձևեղանակներ գտնելով, Հայաստանին է օգնում:

Աստված տա, որ բժշկական այս քննության շրջանը կարճ ըլլա, և ես վերադառնամ Մայր Աթոռ ու շարունակենք մեր նվիրական գործը գալիք ամսին:

Հիշեցեք միշտ մեզ ձեր աղոթքների մեջ»:

***

Սեպտեմբերի 26-ին Վեհափառ Հայրապետը ներկա գտնվեց, Միացյալ հայկական ֆոնդի 100-րդ թռիչքի առիթով, Լոս Անջելեսում կազմակերպված պաշտոնական ճաշին և իր հայրապետական պատգամը փոխանցեց ներկաներին:

Նորին Սուրբ Օծությունը մասնակցեց նաև Հայաստանի անկախության յոթերորդ տարեդարձին նվիրված տոնակատարությանը:

Մինչ Կալիֆոռնիա մեկնելը, Ամենայն Հայոց Հայրապետը Նյու Յորքում մեկ անգամ ևս ենթարկվեց բժշկական ստուգման:

Վեհափառ Հորն ուղեկցում էր հոգեշնորհ Տ. Խորեն աբեղա Հովհաննիսյանը:

«Վեն Նայսի» օդանավակայանում

Սեպտեմբերի 26-ին և 27-ին Կալիֆոռնիայի հայությունն ապրեց պատմական անմոռանալի պահեր: Երկօրյա հանդիսությունների միջոցով

մեծ շուքով նշվեցին Միացյալ Հայկական Ֆոնդի 100-րդ թոիչքը և Հայաստանի Հանրապետության վերանկախացման յոթերորդ տարեդարձը:

Մարդասիրությանը, մարդուն և Հայրենիքին առնչվող այս զույգ տոները նշվեցին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մեծի Տանն Կիլիկիո գահակալ Արամ Ա Վեհափառ Հայրապետի և ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի ներկայությամբ: Մի համախմբում, որ պատմական էր և աննախընթաց, որը նաև վկայությունն էր հայ ժողովուրդը միասնական տեսնելու, միասնաբար գործելու տեսիլքի:

Կալիֆոռնիայի հայ համայնքը, որ վերջին տարիներին ապրեց պառակտման, երկփեղկման դժվարին պահեր, առաջին անգամը լինելով, համախմբվում էր մեկ երդիկի տակ՝ միասնաբար դիմավորելու Ամենայն Հայոց Հայրապետին և Կիլիկյան Աթոռի Գահակալին ու Հայաստանի Հանրապետության նախագահին:

Սեպտեմբեր 26-ի շաբաթ օրը, ժամը 14.00-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, Քըրք Քըրքորյանի անձնական օդանավով ժամանեցին «Վեն Նայսի» օդանավակայան:

Նորին Սուրբ Օծությանը և ՀՀ նախագահին ընկերակցում էին հանրապետության առաջին տիկին Բելլա Քոչարյանը, ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանը, ԱՄՆ-ում (Վաշինգտոն) Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ռուբեն Շուգարյանը, ՄԱԿ-ի մոտ ՀՀ մշտական ներկայացուցիչ Մովսես Աբելյանը, ՀՀ նախագահի օգնական Արմեն Գևորգյանը, նախագահի խորհրդական և մամլո քարտուղար Կասիա Աբգարյանը, խորհրդական Աննա Աղաջանյանը:

Օդանավակայանում բարձրաստիճան հյուրերին դիմավորեցին Մեծի Տանն Կիլիկիո գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետը, որ Լոս Անջելես էր ժամանել սեպտեմբերի 24-ի հինգշաբթի օրը, կեսօրից հետո, մեծաթիվ եկեղեցականներ՝ ամերիկահայոց Արևմտյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանի գլխավորությամբ, Սոցիալ Դեմոկրատ Հնչակյան և Ռամկավար Ազատական կուսակցությունների, Հայ Յեղափոխական Դաշնակցության ղեկավարները, «Հայաստան» համահայկական հիմնադրամի Արևմտյան Ամերիկայի հանձնաժողովի նախագահ Ռաֆֆի Ուրֆալյանը, քաղաքական, մշակութային, բարեսիրական, հայրենակցական և այլ կազմակերպությունների, ինչպես նաև հայ և օտարալեզու լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Հենց օդանավակայանում պատվարժան հյուրերին դիմավորեցին հայկական տարազ հագած աղջիկները՝ ծաղկեփնջերով և ավանդական աղ ու հացով: Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը օրհնեց աղ ու հացը, որից հետո հյուրերին առաջնորդեցին հատուկ այդ օրվա համար պատրաստած ամբիոնի մոտ, ուր պատվո պահակ էին կանգնել ՀՄՄ-ի և ՀՄԸՄ-ի սկաուտները:

«Վեն Նայսի» օդանավակայանում բարեողջույնի խոսքեր ասացին Նորին Սուրբ Օծություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Վեհափառ Հայրապետը և ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը:

Այնուհետև հայկական և ամերիկյան դրոշներով զարդարված ավտոմեքենաները ուղղվեցին դեպի հյուրանոց:

Միացյալ հայկական ֆոնդի 100-րդ թռիչքի տոնակատարությունը «Սենչրրի Փլազա» պանդոկում

Նույն օրը, երեկոյան, «Սենչրրի Փլազա» հյուրանոցի շքեղ ու ընդարձակ սրահում հավաքվել էին ավելի քան 1800 հայ և օտար հյուրեր, ովքեր հատուկ հրավերքով եկել էին մասնակցելու Միացյալ Հայկական Ֆոնդի մարդասիրական 100-րդ թռիչքին նվիրված տոնախմբությանը:

Միացյալ Հայկական Ֆոնդի ատենապետ և օրվա հանդիսավար տիար Ալեք Եմեկեջյանը մեկ առ մեկ ներկայացրեց պատվավոր հյուրերին, ովքեր հոտընկույս ծափահարություններով մուտք գործեցին սրահ: Հյուրերի թվում էին Նորին Սուրբ Օծություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Վեհափառ Հայրապետը, ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանը, Ամերիկյան Կարմիր Խաչի նախագահ Էլիզաբեթ Դոուլը և նրան ընկերակցող կատակերգակ Ջեյ Լենոնը, բարերար Քըրք Քըրքորյանը, երգիչ Շառլ Ազնավուրը, համայնքի կազմակերպությունների ու միությունների ներկայացուցիչները, Ամերիկյան իշխանությունների բարձրաստիճան պաշտոնյաներ և մեծաթիվ հյուրեր:

Նախ հնչեցին Միացյալ Նահանգների և ՀՀ հիմներգները, ապա Մեծի Տանն Կիլիկիո գահակալի օրհնության աղոթքով սկսվեց տոնախմբությունը:

Շնորհակալական հակիրճ խոսքով ներկաներին դիմեց ԼԻՆՍԻ-ի հիմնադրամի տնօրեն, բարերար Քըրք Քըրքորյանը, ապա Միացյալ Հայկական Ֆոնդի տնօրեն Հարութ Սասունյանը պատմական փոքրիկ ակնարկով անդրադարձավ արդեն կատարված մարդասիրական թռիչքներին:

Հիշենք, որ ՄՀՖ-ն ինը տարի առաջ ստեղծվեց հավաքական ճիգերով, ԼԻՆՍԻ-ի կողքին՝ իր կազմում համախմբելով ամերիկահայ կրոնական և բարեսիրական վեց կազմակերպություններ:

Այնուհետև ելույթներ ունեցան նախագահական նախկին թեկնածու Բոբ Դոուլը, Ամերիկյան Կարմիր Խաչի նախագահ տիկին Էլիզաբեթ Դոուլը, երգիչ Շառլ Ազնավուրը, կատակերգակ Ջեյ Լենոնը:

1800 ներկաներին իրենց հայրապետական պատգամն ու օրհնությունները բաշխեցին նաև երկու Վեհափառ Հայրապետները՝ առանձնակի նշելով հայ ժողովրդի ոգին, կորովը, ուժն ու հավատի զորությունը, որոնց շնորհիվ դարեր ի վեր հաղթահարվում են շատ ու շատ դժվարություններ:

Մեծի Տանն Կիլիկիո գահակալը շեշտեց, որ ՄՀՃ-ի գործունեությունը ամերիկահայության միացյալ ճիգով կատարված իրագործում է, իսկ միասնության այս օրինակը պետք է տարածվի նաև հայկական մյուս գաղութներում:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի կարծիքով Քըրք Քըրքորյանի կյանքը օրինակ պետք է ծառայի հայ ժողովրդի զավակներին, քանի որ Ամերիկայի քաղաքացի լինելով հանդերձ, նա ամուր կերպով կառչած է իր արմատներին և ամենից վեր է դասում Հայրենիքի շահը:

Վեհափառ Հայրապետների բարեողջույնի խոսքերից հետո ելույթ ունեցավ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը: Նա նշեց, որ Հայաստանը հպարտ է՝ Միացյալ Նահանգներում նման հզոր հայկական համայնք ունենալու համար: Սփյուռքն այսօր դարձել է Հայաստանի հիմնական աջակիցը համընդհանուր նպատակի իրագործման առումով, այն է՝ Հայաստանը դարձնել ժողովրդավարական ու բարգավաճ երկիր: Նախագահը ավելացրեց նաև, որ «Այսօրվա թիվ մեկ խնդիրը Հայաստանում մրցունակ արդյունաբերության ստեղծումն ու զարգացումն է: Հայաստանը պատրաստ է լինել ձեր գործընկերը: Սա է ժամանակի մարտահրավերը և եղած հաջողությունները ամրապնդելու ուղին»:

Շնորհակալություն հայտնելով ողջ հայ ժողովրդի անունից՝ ցուցաբերած օգնության համար, նախագահ Քոչարյանը Քըրք Քըրքորյանին հանձնեց Հայաստանի Հանրապետության անձնագիր:

Օրվա հանդիսությունն ավարտվեց Վեհափառ Հայրապետների «Պահպանիչ» աղոթքով:

Հայրապետական Ս. Պատարագ
Վեն Նայսիի Ս. Պետրոս եկեղեցում

Սեպտեմբերի 27-ի կիրակի օրը Վեն Նայսիի Ս. Պետրոս հայկական եկեղեցում տեղի ունեցավ պատմական բացառիկ հանդիսավոր արարողություն: Ամենայն Հայոց և Մեծի Տանն Կիլիկիո Վեհափառ Հայրապետների մասնակցությամբ մատուցվեց Սուրբ և անմահ Պատարագ: Օրվա պատարագիչն էր Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Վեհափառ Հայրապետը՝ առընթերակայությամբ գերաշնորհ Տ. Վաչե արքեպս Հովսեփյանի և գերաշնորհ Տ. Մուշեղ եպս. Մարտիրոսյանի:

Հընթացս Ս. Պատարագի, «Հայր մեր»-ից առաջ բոլոր ներկաներին իր հայրապետական պատգամը տվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ հայությանը կոչ անելով միանալ մեկ Հայրենիք և մեկ Եկեղեցի սկզբունքի շուրջ և անցնել գործնական ու շինարար աշխատանքի.

«Ես հավատում եմ, որ ձեզանից յուրաքանչյուրի կենսագրության մեջ այս օրը պետք է լինի անջնջելի, միշտ հիշելի և ձեր կյանքի ուրիշ օրերում

խմոր դառնալիք մի օր, ներշնչման մի օր: Այս օրը եզակի է, իր տեսակի մեջ առանձնահատուկ մի օր է, որ պետք է ցորենի պես աճի: Ինչպես ցորենն է հասկ տալիս, նույնպես և այս օրը ցորենահատիկ է, որ Աստված սերմանեց մեր՝ եկեղեցականներիս, բարերարների և ժողովրդի ձեռքերով: Մենք գործիքներ ենք Աստծու ձեռքում: Մենք այսօր պարտավոր ենք լսելու նրա ձայնը, կատարելու Նրա կամքը, քայլելու Նրա ուղեծրած ուղիով, Ավետարանի ճանապարհով և մեր հայրերի ցույց տված ուղղությամբ»:

Ս. Պատարագին ներկա էին ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը և իր տիկինը, նախագահի շքախմբի մյուս անդամները, Լոս Անջելեսում ՀՀ ավագ հյուպատոս Արմեն Մելքոնյանն ու հյուպատոսարանի անձնակազմը, պաշտոնատար այլ անձինք, մեծաթիվ հյուրեր՝ շուրջ երկու հազար մարդ:

Հավարտ Սուրբ և անմահ Պատարագի, զույգ Վեհափառ Հայրապետները ամպհովանու ներքո առաջնորդվեցին տաճարից դուրս և ներկա հավատացյալ ժողովրդին բաշխեցին իրենց հայրական օրհնությունները:

Լոս Անջելեսի հայության այս ոգևորիչ հանդիպումն ավարտվեց «Կիլիկիա»-ի երգեցողությամբ:

Հայաստանի վերանկախացման տոնակատարությունը Լոս Անջելեսում

Կիրակի երեկոյան տեղի ունեցավ Հայաստանի վերանկախացման յոթերորդ տարեդարձի համաժողովրդական տոնակատարությունը: Այն կազմակերպել էին Հայ Ցեղասպանական Դաշնակցություն, Ռամկավար Ազատական և Սոցիալ Դեմոկրատ Հնչակյան կուսակցությունները:

«Ցունիվերսալ Ամֆիթեատրոն»-ի հսկա սրահում համախմբվել էին հազարավոր հայորդիներ, ովքեր ապրեցին ոգևորության և ազգային հպարտության պահեր:

Տոնակատարության պատվավոր հյուրերի շարքն ամբողջացնում էին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Մեծն Տանն Կիլիկիո Արամ Ա Վեհափառ Հայրապետը, ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը:

Հանդիսությունն սկսեց ՀՄՄ-ի, ՀՄԸՄ-ի և ՀԵԸ-ի սկաուտների կողմից կազմակերպված դրոշակների արարողությամբ, որից հետո ներկաները հոտնկայս ունկնդրեցին Միացյալ Նահանգների և Հայաստանի Հանրապետության հիմներգերը՝ «Սիփան» երգչախմբի կատարմամբ:

Հանդիսավար Բարսեղ Գարթալյանի բացման խոսքից հետո, ելույթներ ունեցան ավագ հյուպատոս տիար Արմեն Մելքոնյանը և պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանը:

ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանը ներկայացրեց Հայաստանի արտաքին քաղաքականության հիմնական դրույթները:

Նախագահ Ռոչարյանը բեմ բարձրացավ ներկաների հոտնկայս ծափահարությունների ներքո և իր ելույթն սկսեց շնորհակալական ջերմ խոսքերով՝ միաժամանակ ամենքին փոխանցելով Հայաստանի ժողովրդի ողջույնները: Նա խոսեց ընդհանրապես Հայաստանի ներկա քաղաքական իրավիճակի և Սփյուռքի հետ ունենալիք հետագա հարաբերությունների մասին: Նախագահը հայտարարեց, որ մենք միասնաբար պետք է պահենք մեր անկախությունը, որպեսզի միասին տոնենք 70-ամյակը, 700-ամյակը:

Իրենց հայրական խոսքերում բարեմաղթանքի ջերմ խոսքեր ասացին նաև երկու Վեհափառ Հայրապետները՝ կամենալով հայ ժողովրդին Աստվածառաք սեր, խաղաղություն և հարատևություն:

Հայաստանի Հանրապետության անկախացման յոթերորդ տարեդարձին նվիրված տոնակատարությունն ավարտվեց Վեհափառ Հայրապետների «Պահպանիչ» աղոթքով:

Մեկնում

Սեպտեմբերի 28-ի երկուշաբթի օրը Միացյալ Հայկական Ֆոնդի պատվավոր հյուրերը թողեցին Լոս Անջելեսը:

Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանն իր գլխավորած պատվիրակությամբ մեկնեց Եութա նահանգ, որտեղից պետք է վերադառնար Հայաստան:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը վերադարձավ Նյու Յորք՝ շարունակելու իր բժշկական քննությունը:

Շուտափույթ առողջություն Նորին Սրբությանը և բարի վերադարձ ի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ